«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ

Կենսաթոշակառուների հաշվի բացման և սպասարկման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմանները /այսուհետ՝ Պայմաններ/ կարգավորում են, «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Բանկ/ և հաշվի բացման Դիմում-Պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/ ստորագրող կենսաթոշակառուի/ների միջև իրականացվող բանկային հաշվի սպասարկման և հաշվին կից դեբետային քարտերի (այսուհետ՝ Քարտեր) տրամադրման և օգտագործման հետ կապված պայմանագրային հարաբերությունները:

«Հաճախորդ», «Դուք», «Ձեր» և «Ձեզ» բառերը վերաբերում են Բանկի կողմից բացված բանկային հաշիվներ տնօրինող կենսաթոշակառուին/ներին:

«ՎՏԲ-Հայաստան Բանկ», «Բանկ», «Մենք», «Մեր» և «Մեզ» բառերը վերաբերում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը:

1.2. Պայմանները հանդիսանում են Բանկի ներքին իրավական փաստաթուղթ, ինչը Մեր հրապարակային առաջարկն (օֆերտա) է՝ կնքելու Պայմանագիր՝ Մեր կողմից հաստատված Պայմանների և Կենսաթոշակառուների համար Բանկում գործող սակագների, ներքին իրավական ակտերի համաձայն (այսուհետ՝ Սակագներ): Սակագները և Պայմանները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

1.3. Պայմանագրի, բանկային հաշվով գործառնությունների իրականացման և նմանատիպ այլ փաստաթղթերի տիպային ձևերը սահմանվում են Մեր կողմից միակողմանիորեն և կարող են պարբերաբար փոփոխվել:

1.4. Ձեր բոլոր բանկային հաշիվների մնացորդները, դրամական մուտքերը և հաշվեգրվելիք տոկոսագումարները համարվում են Ձեր՝ Մեր նկատմամբ բանկային հաշվի սպասարկման կապակցությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով առաջացած (այդ թվում՝ տոկոսների, միջնորդավճարների և այլ վճարների) պարտավորությունների (ներառյալ՝ վարկային) ապահովում: Դուք իրավունք չունեք առանց Մեր գրավոր համաձայնության գրավ դնել բանկային հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցները: Մենք իրավունք չունենք սահմանափակելու Ձեր իրավունքները՝ տնօրինել բանկային հաշվում եղած դրամական միջոցները, բացի օրենքով նախատեսված դեպքերում հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելուց կամ հաշվով գործառնությունները դադարեցնելուց:

1.5. Մենք իրավունք ունենք առանց Ձեզ նախապես տեղեկացնելու, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, այլ բանկերին և վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին, ինչպես նաև ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին տրամադրել Ձեր վերաբերյալ տեղեկություններ՝ վերջիններիս պահանջով կամ Մեր նախաձեռնությամբ:

1.6. Պայմաններում նախատեսված կանոնները կիրառվում են Ձեր բոլոր բանկային հաշիվների նկատմամբ, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ տվյալ հաշվի համար սահմանված կանոններով և/կամ Մեր և Ձեր միջև ստորագրված գրավոր համաձայնությամբ:

1.7. Դուք երաշխավորում եք, որ Ձեր բոլոր տիպի հաշիվներում առկա և մուտքագրվող դրամական միջոցները չեն հանդիսանում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, հաշիվը որևէ կերպ չի օգտագործվելու հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման համար (ՀՀ Քրեական օրենսգրքի 190 և 217.1 հոդվածներով նախատեսված արարքներ):

1.8. Ձեր կողմից Ձեր բանկային հաշվով գործառնություններ կատարելու և/կամ Մեր կողմից մատուցվող այլ ծառայություններ ստանալու կապակցությամբ Մեզ ներկայացվող ցանկացած փաստաթղթի կապակցությամբ հիմնավոր կասկած առաջանալու դեպքում Մենք իրավունք ունենք նշված փաստաթղթերն ուղարկել համապատասխան լիազոր մարմինների փորձաքննությանը՝ իսկությունը պարզելու համար: Մենք որևէ պատասխանատվություն չենք կրում այդ կապակցությամբ առաջացած ուշացումների հետևանքով Ձեր կրած վնասների համար:

1.9. Ի կատարումն ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ և ՀՀ այլ նորմատիվ և/կամ Մեր ներքին իրավական ակտերի պահանջների Մենք իրավունք ունենք Ձեզանից պահանջել ներկայացնելու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը՝ բանկային հաշիվ բացելու, բանկային հաշվով կատարվող գործարքների վերաբերյալ, իսկ վերջիններս չտրամադրելու դեպքում՝ հրաժարվել բանկային հաշիվ բացելուց, բանկային հաշվով գործարքներ կատարելուց:

1.10.Բանկի տեսակետից բանկային հաշվով արտասովոր կամ կասկածելի գործառնություններ կատարելու դեպքում Մենք իրավունք ունենք Ձեզնից պահանջել տվյալ գործառնությունները հիմնավորող փաստաթղթեր (հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր և այլն):

1.11.Մենք իրավունք ունենք կասեցնել, դադարեցնել Ձեր հաշվով իրականացվող գործառնությունները, եթե Դուք Բանկի տեսակետից ողջամիտ ժամկետում չեք ներկայացնում սույն Պայմանների 1.9 և 1.10 կետերում նշված փաստաթղթերը:

1.12.Դուք պարտավոր եք Բանկ ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները, և/կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված պատճենները, եթե դա պահանջվում է Բանկի կողմից, ընդ որում Մենք իրավունք ունենք պատճենել դրանք կամ պահել բնօրինակը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

1.13.Դուք պարտավոր եք Բանկ ներկայացնել հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերում, ինչպես նաև Ձեր կողմից Բանկին տրամադրված այլ տեղեկատվության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, դրանց կատարման օրվանից 10 (տաս) օրացույցային օրվա ընթացքում:

1.14.Մենք պատասխանատվություն չենք կրում Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերի, և դրանցում պարունակող տեղեկատվության, ինչպես նաև Բանկին տրամադրված այլ տեղեկատվության արժանահավատության և հետագայում կատարված փոփոխությունների համար: Փոփոխությունների մասին Դուք պարտավոր եք հայտնել Բանկին և ներկայացնել փոփոխված փաստաթղթերի բնօրինակները, կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված կրկնօրինակները: Քանի դեռ Դուք փոփոխությունների մասին չեք ներկայացրել պատշաճ փաստաթղթեր, Մենք առաջնորդվում ենք Ձեր՝ նախկինում ներկայացրած առկա փաստաթղթերով: Դուք երաշխավորում եք Բանկին հատուցել այն վնասները (ներառյալ բաց թողնված օգուտը), որոնք պատճառել են Բանկին Ձեր կողմից ծանուցելու պարտավորության խախտման հետևանքով:

1.15.Մենք իրավունք ունենք պահանջել, որ Ձեր կողմից օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը թարգմանվեն հայերեն, օրենքով սահմանված դեպքերում՝ վավերացվեն նոտարի կողմից, ընդ որում՝ Մենք չենք հատուցում թարգմանության և վավերացման ծախսերը:

1.16.Սույն Պայմանների ուժով Մենք հանդես ենք գալիս որպես Ձեր հարկային գործակալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով՝ Պայմանագրի ուժով Ձեր ստացած եկամուտներից վճարման ենթակա հարկային և այլ պարտադիր վճարումների գծով:

1.17. Մենք պատասխանատու չենք պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման չնախատեսված ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Ձեր վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:

1.18.Դուք պատասխանատվություն եք կրում հաշվով կատարվող գործարքների ՀՀ օրենսդրությանը համապատասխան լինելու, ինչպես նաև հաշիվ բացելու և գործարք կատարելու հիմք հանդիսացած փաստաթղթերի և դրանցում կատարված փոփոխությունների ճշտության համար:

1.19.Դուք կարող եք ստանալ արդիական տեղեկություն Ձեր բանկային հաշիվների դրության և շարժի վերաբերյալ, ինչպես նաև նորություններ և շնորհավորանքներ Բանկի կողմից՝ ստորագրելով Մեր կողմից սահմանված համապատասխան փաստաթղթեր՝ SMS-բանկինգ բջջային կապի միջոցով հեռակառավարման բանկային սպասարկման համակարգին միանալու նպատակով:
1.20.Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Մենք և Դուք պատասխանատվություն ենք կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
1.21.Սույն Պայմաններով չկարգավորվող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
1.22.Դուք հավաստում եք և համաձայն եք, որ Բանկային հաշվի սպասարկման պայմանագիրը կնքվում է մեկ բնօրինակից, որը պահվում է Բանկում: Ձեր առաջին իսկ պահանջի դեպքում Ձեզ կտրամադրվի Պայմանագրի պատճենը՝ վավերացված Բանկի կողմից:

2. Բանկային հաշվի բացման և պլաստիկ քարտի տրամադրման պայմաններ

2.1. Ձեզ համար Մենք բացում ենք բանկային հաշիվ ՀՀ դրամով և հաշվին կից տրամադրում ենք Քարտ, որով հաշվառվում են Ձեր հաշվով կատարված բոլոր տեսակի գործարքները, Կենսաթոշակառուների համար Բանկում գործող սակագներով սահմանված գործարքներից բխող բոլոր տեսակի գանձումները, միջնորդավճարները, ինչպես նաև գանձվող տույժերն ու տուգանքները (եթե այդպիսիք նախատեսված են):
2.2. Հաշիվը բացվում է սույն Պայմանների 2.7. կետի համաձայն փաստաթղթերի ընդունման և Պայմանագրի ստորագրման օրը:
2.3. Հաշվի բացման օրը Ձեզ տրամադրվում է նաև Ձեր կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկանք՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը ներկայացնելու նպատակով, որտեղ նշվում է կենսաթոշակառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հաշվի բացման ամսաթիվը և հաշվեհամարը:
2.4. Քարտը տրամադրվում է Պայմանագիրը ստորագրելու պահից առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Քարտը ստանալու համար Ձեզ անհրաժեշտ է անձամբ ներկայանալ Բանկ:
2.5. Քարտը համարվում է Բանկի սեփականությունը և Ձեզ է տրամադրվում օգտագործման իրավունքով: Քարտի գործողության ժամկետը սահմանվում է տվյալ պահին Բանկում գործող Կենսաթոշակառուների համար սահմանված Սակագների համաձայն:
2.6. Քարտը ստանալուն պես Դուք պետք է ստորագրեք Քարտի դարձերեսին առկա ստորագրության համար նախատեսված դաշտում: Քարտային գործարքների անդորրագրերի Ձեր ստորագրությունը պետք է համապատասխանի Քարտի դարձերեսին առկա ստորագրությանը: Ստորագրության անհամապատասխանությունը կարող է հիմք հանդիսանալ Քարտի սպասարկումը մերժելու համար:
2.7. Հաշվի բացման համար Ձեզանից պահանջվող փաստաթղթերի ցանկը (անձը հաստատող փաստաթուղթ, Հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) կամ Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանք, Կենսաթոշակային գրքույկ (առկայության դեպքում)) սահմանվում է Մեր կողմից և կարող է պարբերաբար փոփոխվել:
2.8. Մենք իրավունք ունենք մերժել Ձեր բանկային հաշվի բացումը , եթե՝

- Դուք Բանկ չեք ներկայացրել բանկային հաշվի բացման համար պահանջվող այն բոլոր փաստաթղթերը, որոնք պահանջվում են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերով,
- Ձեր կողմից ներկայացվել են ոչ արժանահավատ տեղեկություններ,
- Դուք չեք վճարել բանկային հաշվի բացման համար Սակագներով նախատեսված վճարները (եթե այդպիսիք նախատեսված են),
- Ձեր վերաբերյալ առկա են տեղեկություններ՝ Ձեր ահաբեկչական գործունեության մեջ ներգրավված լինելու մասին՝ համաձայն «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերի,
- Դուք Բանկ չեք ներկայացրել բանկային հաշվի բացման համար պահանջվող այն բոլոր փաստաթղթերը, որոնք պահանջվում են Օտարերկրյա հաշիվների հարկման մասին ԱՄՆ օրենքի (այսուհետ՝ FATCA) համաձայն,
- Օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

2.9. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի Ծառայության(ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն) կողմից նշանակված կենսաթոշակը ստանալու համար Բանկում բանկային հաշվի բացման և քարտի ստացման դիմում-պայմանագիրը ստորագրվում է տվյալ անձի օրինական ներկայացուցչի՝ ծնողի կամ խնամակալի կողմից,որոնց անվամբ էլ բացվում է բանկային հաշիվը կից քարտով:
2.10.Տասնչորս տարեկան դարձած անչափահասն իրավունք ունի կենսաթոշակ ստանալու համար Բանկում բանկային հաշիվ՝ կից քարտով բացել անձամբ:
2.11.Քարտերը կարող եք օգտագործել ՀՀ և արտերկրյա այն առևտրի/սպասարկման և կանխիկացման կետերում, որոնց վրա առկա է VISA լոգոտիպը: Մեր Քարտերը հնարավորություն են ընձեռում՝

- անկանխիկ վճարումներ կատարել և կանխիկ գումարներ ստանալ բանկոմատներում (ATM),
- անկանխիկ վճարումներ իրականացնել առևտրի և սպասարկման կետերում տեղադրված էլեկտրոնային տերմինալների միջոցով,
- հաշվով կանխիկ և անկանխիկ գործարքներ իրականացնել Բանկի տարածքում՝ առանց Քարտի անմիջական օգտագործման,
- վճարումներ և փոխանցումներ իրականացնել նաև ինտերնետի միջոցով:

2.12.Քարտի հետ մեկտեղ, փակ ծրարով Ձեզ է տրամադրվում Քարտի ծածկագիրը (PIN), որը կիրառվում է Ձեր անձը նույնականացնելու համար բանկոմատներում և առևտրի սպասարկման կետերում գործարքներ կատարելիս: Ծածկագիրը ենթակա չէ հրապարակման կամ երրորդ անձանց տրամադրման: Հարկավոր է ուշադիր լինել ծածկագիրը մուտքագրելիս, քանի որ այն երեք անգամ շարունակաբար սխալ մուտքագրելու դեպքում Քարտն արգելափակվում է և արգելահանվում է Ձեր գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որի դիմաց գանձվում են Բանկի Սակագներով նախատեսված վճարներ:
2.13. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Դուք պարտավոր եք Քարտը վերադարձնել Բանկ, կամ ոչնչացնել Քարտը՝ մագնիսական երիզի երկայնքով կտրատելով մասերի:

3. Բանկային/քարտային հաշվով գործառնությունների իրականացման պայմաններ

3.1. Բանկային հաշվով գործառնությունները Մենք իրականացնում ենք ՀՀ օրենսդրության, Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի և Պայմանների/ Սակագների պահանջներին համապատասխան:
3.2.Մենք պարտավոր ենք ապահովել Ձեզ սպասարկելու կապակցությամբ Մեզ հայտնի դարձած և ՀՀ օրեսնդրության համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը: Ձեր, Ձեր հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն Ձեզ և Ձեր օրինական ներկայացուցիչներին, ինչպես նաև այլ անձանց՝ Ձեր համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.3.Բանկային հաշվով գործարքներ կատարելու նպատակով Դուք կամ Ձեր կողմից լիազորված անձը կարող եք դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
3.4.Բանկային հաշվով գործառնությունների իրականացման ժամկետները որոշվում են Բանկի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններով, Բանկի կողմից սահմանված այլ փաստաթղթերով կամ իրավական ակտերով:
3.5.Մենք պարտավոր ենք իրականացնել Ձեր հաշվարկա-դրամարկղային համալիր սպասարկումը, այդ թվում՝

- ընդունել և հաշվին հաշվեգրել Ձեր անվամբ ստացվող կանխիկ և անկանխիկ դրամական միջոցները (այդ թվում՝ կենսաթոշակի գումարները),
- Ձեր կարգադրություններով հաշվում առկա դրամական միջոցների սահմաններում կատարել փոխանցումներ, ինչպես նաև տրամադրել կանխիկ դրամական միջոցներ:
- Կատարել հաշվարկա-դրամարկղային սպասարկման հետ կապված այլ բանկային գործառնություններ:

3.6. Մենք պարտավոր ենք Ձեր կարգադրությամբ՝ երրորդ անձանց պահանջով դրամական միջոցներ դուրս գրել հաշվից, եթե կարգադրության մեջ նշված են անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռնում Մեզ՝ համապատասխան պահանջ ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

3.7. Մենք իրավունք ունենք Ձեր հաշվարկա-դրամարկղային փաստաթղթերում հիմնավորված կասկածներ հայտնաբերելու դեպքում կասեցնել գործառնության կատարումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

3.8. Բանկային հաշվին/ից դրամական միջոցների մուտքագրումները և/կամ ելքագրումներն իրականացվում են մուտքային/ելքային դրամարկղային օրդերների հիման վրա: Ձեր կողմից նշված անդորրագրերի վրա դրված ստորագրությունը հանդիսանում է բանկային հաշվով կատարված գործառնության հավաստիացում: Քարտի միջոցով Բանկային հաշվից կատարված ելքագրումների հավաստիացումն ապահովում են գործարքները հավաստող պահպանված վճարային անդորրագրերը:

3.9. Մենք կլորացնում ենք կանխիկ վճարվող դրամական միջոցները հետևյալ կարգով.

3.9.1. ՀՀ 5 (հինգ) դրամից մեծ կամ հավասար գումարները կլորացվում են տասի,

3.9.2. ՀՀ 5 (հինգ) դրամից փոքր գումարները կլորացվում են զրոյի:

3.10. Քարտով կատարված գործարքներն, ինչպես նաև դրանցից բխող բոլոր տեսակի գանձումներն ու միջնորդավճարները քարտային հաշվին կարող են հաշվեգրվել գործարքի կատարման օրը կամ ավելի ուշ՝ համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված ժամկետներում:

3.11. Դուք Մեզ իրավունք եք տալիս անակնկալ կարգով դրամական միջոցներ դուրս գրել Ձեր՝ Բանկում վարվող հաշիվներից հետևյալ դեպքերում՝
- Բանկի կողմից Ձեր բանկային հաշվին սխալմամբ միջոցների մուտքագրման, ինչպես նաև գերածախսի, դեբիտորական պարտքի առաջացման դեպքում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերի և այլ պարտադիր վճարների կատարման նպատակով,
- Դատարանի վճռով, այդ թվում՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ ստանալու դեպքում,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

3.12. Մենք իրավունք ունենք Ձեր հաշվին բավարար գումարների առկայության դեպքում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պահանջով, որպես սխալ վճարված գումար, ՀՀ պետական բյուջե փոխանցել Պահանջագրում նշված գումարը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայությանը տեղեկացնելով ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարի մասին:

3.13. Դուք իրավունք ունեք Պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած ժամանակ տեղում ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող հաշվարկա-դրամարկղային գործառնությունների սակագներին և այլ հրապարակային տեղեկատվությանը:

3.14. Դուք իրավունք ունեք ինքնուրույն տնօրինել հաշվում առկա միջոցները, տալ Մեզ հաշվարկա-դրամարկղային սպասարկման կարգադրություններ:

3.15. Դուք իրավունք ունեք կարգադրել Մեզ Ձեր բանկային հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ Ձեր պարտավորությունների կատարման հետ:

3.16. Քարտային գործարքը հաշվառելիս Բանկը օգտագործում է Ձեր բանկային հաշվին առկա դրական մնացորդը: Դուք ընդունում եք,որ Քարտով գործառնությունների հաշվառման համար անհրաժեշտ գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում Մենք կարող ենք, առանց Ձեր նախնական հավանության կամ հետագա համաձայնության, սահմանել Ձեր քարտային հաշվի գծով գերածախս, արգելափակել Ձեր քարտը՝ գանձելով Սակագներով սահմանված տույժեր (առկայության դեպքում): Քարտն արգելափակումից կհանվի տույժերի և/կամ գերածախսի վճարումից հետո:

3.17. Ձեր Քարտով /անկախ Քարտի ակտիվության կարգավիճակից/ կատարվող այն գործարքների դեպքում, որոնց մասով հավաստագրում չի պահանջվում, այն է՝ երբ գործարքը կատարվում է offline ռեժիմում և սպասարկող կազմակերպությունը /խանութում, ռեստորանում, ինքնաթիռում և այլն/ online կապ չի հաստատում Քարտը թողարկող Բանկի հետ՝ համապատասխան թույլտվություն ստանալու համար, ապա վերը նշվածի արդյունքում Բանկի հանդեպ առաջացած Ձեր պարտավորության /դեբիտորական պարտքի/ համար պատասխանատու եք Դուք և պարտավորվում եք այն վերադարձնել Բանկի կողմից առաջին իսկ պահանջի դեպքում /գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով/:

4. Վճարման հանձնարարականներով կատարվող գործառնությունների պայմաններ

4.1. Բանկային հաշվով գործարքներն իրականացվում են Ձեր կողմից կամ անունից պատշաճ կերպով լրացված Վճարման հանձնարարականների հիման վրա:

4.2. Ձեր կողմից ներկայացված Վճարման հանձնարարականները Մենք ընդունում ենք Բանկի կողմից սահմանված գործառնական օրերին և ժամերին:

4.3. Մենք կատարման ենք ընդունում Ձեր Վճարման հանձնարարականը միայն բանկային հաշվում բավարար միջոցների առկայության պարագայում: Միջոցները դուրս են գրվում Ձեր Վճարման հանձնարարականների և դուրսգրման այլ փաստաթղթերի՝ Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականությամբ), իսկ անբավարարության դեպքում՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

4.4. Այն դեպքում, երբ Ձեր բանկային հաշվին առկա գումարները բավարար չեն Վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու համար, Վճարման հանձնարարականը վերադարձվում է Ձեզ առանց կատարման, ընդ որում՝ Մենք նման դեպքերում պատասխանատվություն չենք կրում Ձեր կարգադրությունը չկատարելու հետևանքով Ձեր կրած վնասների համար:

4.5. Դուք իրավունք ունեք չեղյալ համարել Ձեր կողմից ներկայացված Վճարման հանձնարարականը՝ ամբողջությամբ փոխհատուցելով այդ կապակցությամբ Բանկի կրած վնասները:

4.6. Մենք իրավունք ունենք հրաժարվել Ձեր հանձնարարությամբ հաշվարկա-դրամարկղային գործառնությունների կատարումից, եթե Ձեր կողմից խախտվում են ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի, Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները, հաշվարկային գործառնությունների իրականացման համար պահանջվող բավարար և անհրաժեշտ հաշվարկա-դրամարկղային փաստաթղթերը չեն ներկայացվել կամ չեն իրականացվում Պայմանագրով ստանձնած Ձեր պարտավորությունները:

4.7. Վճարման հանձնարարականներին վերաբերող այն դրույթները, որոնք ներառված չեն Պայմաններում, կարգավորվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կենտրոնական

բանկի խորհրդի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում դրամական փոխանցումների կատարման առավելագույն ժամկետների վերաբերյալ» կարգով, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ ներքին իրավական փաստաթղթերով:
4.8. Բանկի կողմից ակցեպտավորված վճարման հանձնարարականի գումարը Ձեր բանկային/քարտային հաշվին կրեդիտագրվելու մասին Բանկը Ձեզ կտեղեկացնի Ձեր կողմից ընտրված Բանկի հետ հաղորդակցման եղանակով քաղվածքի տրամադրման միջոցով՝ քաղվածքի տրամադրման պայմանների և ժամկետների համաձայն:
4.9.Ի օգուտ Ձեր բանկային/քարտային հաշվին Բանկում միջբանկային կամ միջազգային փոխանցումների առկայության պարագայում Բանկի պարտավորությունն է հանդիսանում նշված դրամական միջոցների կրեդիտագրումը Ձեր հաշվին, իսկ նպատակ դաշտում նկարագրված այլ գործողությունների (այդ թվում՝ վարկի վաղաժամկետ մարում կամ տոկոսի մարում) իրականացման համար անհրաժեշտ է Ձեր (կամ Ձեր օրինական ներկայացուցչի կողմից) նախընտրած եղանակով ներկայացնել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին ուղղված համապատասխան հանձնարարական:

5. Հաշվով և Քարտով կատարված քաղվածքների տրամադրման պայմաններ

5.1. Ձեր բանկային հաշվի համար կարող եք ստանալ ամսական քաղվածք՝ Ձեր կողմից նախապես ընտրված եղանակով: Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են տվյալ հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում: Հաշվի քաղվածքը Ձեզ է տրամադրվում Բանկի աշխատակցի ստորագրությամբ և դրոշմակնիքով:
5.2.Մենք պարտավոր չենք Ձեզ տրամադրել քաղվածք, եթե հաշվետու ժամանակաշրջանում բացակայում է տվյալ բանկային հաշվով շարժ (հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել):
5.3.Ձեր կողմից քաղվածքի ճշտությունը կարող է վիճարկվել հաշվի քաղվածքը Բանկի կողմից ուղարկելու կամ տրամադրելու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ քաղվածքը համարվում է Ձեր կողմից հաստատված: Մեր մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերման դեպքում ուղղումը կատարվում է 2 (երկու) բանկային օրվա ընթացքում: Ուստի խնդրում ենք համեմատել նաև Քարտով գործարքները հավաստող պահպանված վճարային անդորրագրերի տվյալները քաղվածքում արտացոլված գործարքների մանրամասների հետ: Մենք իրավունք ունենք մերժել նշված ժամկետից ուշ ներկայացված բողոքարկման դիմումները:

6. Բանկային հաշվից Սակագներով սահմանված միջնորդավճարների և այլ վճարների գանձման պայմաններ

6.1.Բանկային հաշվի բացման և գործառնությունների իրականացման համար Մենք Ձեզանից գանձում ենք վճար (միջնորդավճար) և/կամ վճարում ենք տոկոսներ՝ համաձայն բանկային հաշվի բացման/հաշվով գործառնությունների իրականացման օրվա դրությամբ Բանկում գործող Կենսաթոշակառուների համար սահմանված Սակագների (այն դեպքում, եթե նախատեսված է):
6.2.Մենք հաշվարկա-դրամարկղային սպասարկման վճարը հաշվից գանձում ենք գործառնության կատարման (ծառայության մատուցման) պահին գործող Կենսաթոշակառուների համար սահմանված Սակագներով՝ գործառնության կատարման (ծառայության մատուցման) հետ միաժամանակ:
6.3.Հաշվի օրական մնացորդի նկատմամբ Մենք կարող ենք հաշվեգրել տոկոս՝ տվյալ ժամանակահատվածի համար Բանկում գործող Կենսաթոշակառուների համար սահմանված Սակագներով սահմանված չափով և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված կարգով, ընդ որում՝ օրական մնացորդ է համարվում տվյալ գործառնական օրվա ավարտին հաշվի փաստացի մնացորդը:
6.4.Ձեր անունով մուտք եղած դրամական միջոցները հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները փոխանցելու կամ դրանք վճարելու մասին ցուցումները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում Մենք պարտավոր ենք այդ գումարից տոկոսներ վճարել Ձեզ՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան:
6.5.Բանկի կողմից առաջարկվող՝ համապատասխան տեսակի բանկային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքները հրապարակվում են սույն Պայմանների իմաստով Ձեր համար հասանելի եղանակով:
6.6.Բանկային հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ՀՀ դրամով:
6.7.Հաշիվներից կատարվող փոխանցումները, ինչպես նաև հաշվից կատարվող կանխիկ գործարքի դեպքում միջնորդավճարները առաջնահերթ գանձվում են գործարքի առարկա հանդիսացող հաշվից/ներից, վերջինիս/ներիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում Ձեր այլ՝ Բանկում գործող հաշիվներից:

7. Քարտի օգտագործում

7.1. Քարտի օգտագործման անվտանգությունն ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում՝
ա) Քարտը պահպանել ապահով վայրում, այնպես, որ այն հասանելի չդառնա այլ անձանց: Քարտը մի պահեք էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսների, հեռուստացույցների և այլ էլեկտրական տեխնիկայի) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ:
բ) ծածկագիրը չտրամադրել երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին: Խնդրում ենք հիշել ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Քարտի դարձերեսին: Քարտի և ծածկագրի համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում:
գ)չպատասխանել էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել Ձեր ծածկագիրը, Քարտի համարը կամ Քարտի հակառակ երեսին առկա եռանիշ թվերը (CVV2 կոդը):
դ) եթե ինտերնետի միջոցով գործարք կատարելիս պահանջվում է ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվել գործարքից: Ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկոմատներում և կանխիկացման համար նախատեսված POS-տերմինալներում գործարքներ կատարելիս, ինչպես նաև որոշ դեպքերում առևտրային կետերում ապրանքի/ծառայության դիմաց վճարելիս: Ինտերնետով գործարքներ կատարելիս օգտվել միայն վստահելի կայքերից:
ե) բանկոմատներով գործարքներ իրականացնելիս նախընտրել ՎՏԲ-Հայաստան Բանկի բանկոմատները: Հետևեք, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց: Անհապաղ դիմել Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ Ձեր ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց:
զ) օգտվել Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ SMS ծանուցումներ ստանալու Մեր ծառայությունից: Այն հնարավորություն է տալիս անմիջապես տեղեկանալ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ և ժամանակին միջոցներ ձեռնարկել անճշտություններն ուղղելու և Քարտի ապօրինի օգտագործումը կանխելու ուղղությամբ:
7.4. Դուք իրավունք ունեք դիմել Բանկին Ձեր քարտային հաշվին մեկ և ավելի լրացուցիչ Քարտերի կցելու նպատակով: Լրացուցիչ Քարտեր ստանալու համար Դուք պետք է լրացնեք դիմում՝ Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան: Լրացուցիչ Քարտերի գործարքներից առաջացած պարտավորությունների կատարումը Բանկի առջև Ձեր պատասխանատվությունն է:

8.Քարտի կորուստը

8.1. Քարտի կորստի կամ հափշտակության մասին Դուք պետք է անհապաղ տեղեկացնեք Մեզ հետևյալ եղանակներով.
ա) հեռաձայնելով Բանկի + 37410 560 708 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնելով Ձեր Դիմում-պայմանագրի մեջ նշված թվային ծածկագիրը: Մենք կարող ենք պահանջել Ձեր բանավոր կարգադրության գրավոր հաստատում, նախքան Քարտն արգելափակելը: Բանավոր դիմումի ստացումից և Ձեր ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է:

բ) Բանկի ցանկացած մասնաճյուղ ներկայանալուց և Ձեր անձը հաստատելուց հետո Ձեր Քարտն արգելափակվում է 15 րոպեի ընթացքում:
8.2. Արգելափակումից հետո Ձեր Քարտը հայտնաբերելու դեպքում՝ Դուք պետք է տեղեկացնեք Մեզ այդ մասին: Քարտի գործողությունը կարող է վերականգնվել արգելափակումից հանելու համար Սակագներով սահմանված վճարները գանձելուց հետո:

9. Քարտերով կատարվող գործարքների օրինականությունը և գաղտնիությունը

9.1. Քարտերը չեն կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Քարտային գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Մենք իրավունք ունենք առանց Ձեզ ծանուցելու չհաստատել գործարքը և/կամ արգելափակել Քարտը: Մենք կարող ենք նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել՝ նախքան գործարքի կատարումը: Քարտային գործարքների մասին Բանկի գրանցումները համարվում են տվյալ գործարքների կատարումը հավաստող փաստաթղթեր:
9.2. Մենք կարող ենք չհաստատել գործարքները և/կամ արգելափակել Քարտը, եթե քարտային գործարքները կապված են հանրության կարգերին ու բարոյականությանը հակասող գործարքների հետ (օրինակ՝ ինտերնետային մոլախաղեր, բացահայտ անպատշաճ բովանդակություն ունեցող առարկաների և նյութերի ձեռքբերում և վաճառք և այլն): Քարտի լոգոտիպի արտացոլումը գործարքների կատարման վայրերում, ներառյալ՝ ինտերնետային կայքերում, չի նշանակում, որ գործարքն օրինական է:
9.3. Մենք հնարավորություն ենք ընձեռում մեր քարտապաններին ստանալ իրենց Քարտերին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ կարճ հաղորդագրություններ (SMS) այդպիսով հնարավորինս կանխելով Քարտերի ապօրինի օգտագործումը: Վերոնշյալ հաղորդագրությունը (SMS) ստանալուն պես Դուք պետք է հավաստիանաք, որ գործարքը կատարվել է Ձեր կամ Ձեր կողմից լիազորված անձի կարգադրությամբ, մասնակցությամբ կամ գիտությամբ: Քարտի ապօրինի օգտագործման դեպքում Դուք պարտավոր եք տեղեկացնել Բանկին՝ զանգահարելով (+37410) 560 708 շուրջօրյա հեռախոսահամարով: Ապօրինի օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում Ձեր Քարտը շտապ կարգելափակվի և Բանկը Ձեր դիմումի հիման վրա կուսումնասիրի գործարքի մանրամասները և, անհրաժեշտության դեպքում, կսկսի գործարքի բողոքարկման գործընթացը:

10. Ձեր և Բանկի հաղորդակցումը

10.1. Մեր և Ձեր միջև փաստաթղթերի առաքումը (ներառյալ՝ Պայմանների և Սակագների փոփոխությունների մասին Ձեզ ծանուցելն ու քարտային հաշվի քաղվածքները Ձեզ տրամադրելը) իրականացվում է գրավոր ձևով՝ Պայմանագրի մեջ նշված Ձեր նախընտրած եղանակով:
10.2. Եթե Մեր և Ձեր միջև հաղորդակցումն իրականացվում է փոստային կապի միջոցով, Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից փաստաթղթերի հանձնման ուշացման կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության բացահայտման համար:
10.3. Դուք պարտավոր եք անհապաղ Մեզ ծանուցել Ձեր հասցեի և կապի միջոցների ցանկացած փոփոխության մասին: Նախքան Ձեր ծանուցումը ստանալը՝ Մենք Ձեզ հետ կհաղորդակցվենք Ձեր կողմից նախապես տրամադրված տվյալների հիման վրա:
10.4. Մենք իրավունք ունենք ձայնագրել Մեր և Ձեր բանավոր հաղորդակցությունը, ներառյալ հեռախոսային խոսակցությունները: Կատարված ձայնագրությունները ծառայում են ապացույց՝ հնարավոր տարաձայնությունների կարգավորման ժամանակ:

11. Ձեր և Բանկի պատասխանատվությունը

11.1. Ձեր Քարտի սպասարկումը ենթադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի միջոցների կիրառում և երրորդ անձանց ծառայությունների օգտագործում: Դուք ընդունում եք, որ Բանկը չի կարող պատասխանատվություն կրել Ձեր Քարտերով իրականացվող գործառնությունների հետևանքով Ձեզ պատճառած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասներն առաջացել են Բանկի աշխատակիցների դիտավորության, կոպիտ սխալի կամ անուշադրության հետևանքով:
11.2. Մենք և Դուք կազատվենք միմյանց առջև ստանձնած պարտավորությունների խախտման համար սահմանված պատասխանատվությունից, եթե խախտումն արդյունք է կապի ընդհատումների, էլեկտրամատակարարման դադարեցման, պետական մարմինների ակտերի, քաղաքացիական հուզումների, երկրաշարժի, հեղեղումների և տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի այլ հանգամանքների ազդեցության:

12. Պայմանագրի փոփոխության կատարման և լուծման կարգը

12.1 Մենք իրավունք ունենք միակողմանիորեն փոփոխել Պայմանները և Սակագները:
12.2. Դուք պարտավոր եք (անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար տարեկան առնվազն մեկ անգամ, նախորդ տարվա ընթացքում բանկ ներկայանալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ եւ հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին, ընդ որում Կենսաթոշակառուի կողմից հայտարարություն տալ է համարվում Բանկում անձամբ տվյալ հաշվով որևէ գործարքի կատարումը կամ քարտի սպասարկման (ներառյալ վերաթողարկում) հետ կապված որևէ փաստաթղթի ստորագրումը:
12.3.Սույն Պայմանագրի շրջանակում Ձեզ տրամադրված Քարտի գործողության ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ սկսած Քարտի թողարկման պահից: Քարտը վերաթողարկվում է Ձեր (կամ Ձեր կողմից Լիազորված անձի) գրավոր դիմումի հիման վրա: Քարտի գործողության ավարտից հետո վերջինս ենթակա է ավտոմատ վերաթողարկման, եթե մինչև Քարտի գործողության ավարտը վերջին 3 օրացուցային ամսում իրականացվել է գոնե մեկ անկանխիկ կենսաթոշակային մուտք:
12.4.Սույն Պայմանների կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման դադարեցման վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը կհանգեցնի տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, Մենք Ձեզ նոր պայմանների վերաբերյալ տեղեկացնում ենք, Ձեր կողմից ընտրված հաղորդակցման եղանակով տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ: Բանկի կողմից տեղեկատվությունը համարվում է Ձեզ տրամադրված այն Ձեր փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում Ձեր համար այն հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից, թե Դուք փաստացի երբ էք ստանում այդ տեղեկատվությունը:
12.5.Դուք ցանկացած ժամանակ իրավունք ունեք Ձեր դիմումի հիման վրա միակողմանիորեն լուծել Պայմանագիրը և դադարեցնել Քարտի հետագա սպասարկումը: Ձեր կողմից լրացրած դիմումը (Բանկի կողմից սահմանված տիպային ձևին համապատասխան) ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Մենք կդադարեցնենք Ձեր Քարտի գործողությունը՝ մարելով Բանկի հանդեպ Ձեր պարտավորությունները Բանկում Ձեր հաշիվներին առկա գումարներից: Քարտի գործողությունը դադարեցնելուց 45 (քառասունհինգ) օր անց Ձեր հաշիվը կփակվի, իսկ հաշվի վրա առկա միջոցները կփոխանցվեն Ձեր այլ բանկային հաշվին կամ, Ձեր ցանկությամբ, կտրամադրվեն կանխիկ միջոցների տեսքով:
12.6.Մենք իրավունք ունենք չլուծել Պայմանագիրը, եթե Ձեր հաշիվներին առկա գումարները բավարար չեն Բանկի հանդեպ Ձեր ստանձնած պարտավորությունները մարելու համար:
12.7. Մենք իրավունք ունենք միակողմանիորեն լուծել Պայմանագիրը, եթե՝

- Ձեր հաշվին/ներին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն բավականացնում հաշիվը սպասարկելու համար Բանկի սակագներով սահմանված վճարները գանձելու համար, և/կամ հաշվով գործարքներ չեն իրականացվել:

- Ձեր կողմից խախտվել են Պայմանագրով նախատեսված կետերից որևէ մեկը՝ ոչ ուշ քան 1 (մեկ) ամիս առաջ Ձեզ այդ մասին տեղյակ պահելով:
- Ի կատարումն FATCA-ի պահանջների՝ Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փակել Ձեր կենսաթոշակային հաշիվը, եթե Ձեր տվյալներում Բանկի կողմից հայտնաբերվել են ԱՄՆ հարկատուի հատկանիշներ (այն է՝ ԱՄՆ քաղաքացիություն, ԱՄՆ ռեզիդենտություն, ԱՄՆ-ում մշտական գտնվելու թույլտվություն, ԱՄՆ-ում ծննդավայրի, ԱՄՆ-ում բնակության և/կամ փոստային հասցեի, ԱՄՆ տարածքում կոնտակտային հեռախոսահամար և/կամ ֆաքսի համարի, ԱՄՆ-ում գրանցման հասցե ունեցող անձին տրամադրված լիազորագրի կամ ստորագրության իրավունքի և ԱՄՆ-ում գտնվող հաշվին մեկ անգամից ավել փոխանցման իրականացման համար տրված Պարբերական վճարումների հանձնարարականի առկայություն) և Դուք հրաժարվում եք Բանկին տրամադրել Ձեր վերաբերյալ տեղեկատվությունը ԱՄՆ Հարկային ծառայությանը/ ԱՄՆ հարկային գործակալի գործառույթ իրականացնող անձին FATCA-ի պահանջների համաձայն:
- Ձեր կողմից խախտվել են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

13.Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրեսդրությամբ սահմանված կարգով:
Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:
Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
Հայտարարություն: Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Հայտարարություն: Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

14.Ծանուցում

ՀԱՐԳԵԼԻ Հաճախորդ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք միևչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 6, հեռախոս՝ +374 10 583514, ինտերնետային կայք՝ www.adgf.am Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:
Հատուցման դեպքը
Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.
- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):
- Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:
Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը
Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:
Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ. Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

i. Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
ii. Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
iii. Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
iv. Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
v. Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
vi. Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ (այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ) □,

չերաշխավորված ավանդ □:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, Հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական քարտի) կամ Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

Հրապարակվել է «14» ապրիլ 2016թ.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ֆիզիկական անձանց Կենսաթոշակային հաշվի

1. Կենսաթոշակային հաշվի նկարագրություն, էական դրույթներ

1.1. Կենսաթոշակային հաշիվը բացվում է ՀՀ կեսաթոշակառու ֆիզիկական անձանց կողմից:

1.2. Կենսաթոշակային հաշիվը բացվում է հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման և Պայմանագրի ստորագրման օրը:

1.3. Հաշվի բացման օրը Ձեզ տրամադրվում է նաև Ձեր կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկանք՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը ներկայացնելու նպատակով, որտեղ նշվում է կենսաթոշակառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հաշվի բացման ամսաթիվը և հաշվեհամարը:

1.4. Կենսաթոշակային հաշվը բացում է ՀՀ դրամով:

1.5. Կենսաթոշակային հաշվով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝

- ընթացիկ գործառնությունների իրականացում, այդ թվում դրամական միջոցների փոխանցումներ, անկանխիկ արտարժույթի փոխարկային գործառնություններ:
- ժամկետային ավանդների ներդրման հետ կապված գործառնությունների իրականացում՝ բացում, փակում:
- Բանկում գործող պայմաններով վարկերի ստացում, տոկոսների մարում, վարկի մայր գումարի մարում:
- Բանկի Տնօրինության որոշմամբ այլ գործառնությունների իրականացում:

1.6. Կեսաթոշակային հաշվից թույլատրվում են անսահմանափակ անգամ լրացուցիչ մուտքագրումներ և ելքագրումներ:

1.7. Բանկը Կենսաթոշակային հաշվին դրամական միջոցների մուտքագրումն և ելքագրումն իրականացնում է մեկ բանկային օրվա ընթացքում:

1.8. Կենսաթոշակային հաշվի դիմաց տոկոսները վճարվում են ՀՀ դրամով:

1.9. Կենսաթոշակային հաշիվը բացվում է Կենսաթոշակառուի ներկայությամբ՝ իր անձը հաստատող փաստաթղթի և Հանրային ծառայությունների համարանիշի (սոցիալական քարտի) կամ Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի հիման վրա՝ Կենսաթոշակառուի լիազորված անձի ներկայությամբ:

1.10.Բանկը իրականացնում է նաև կենսաթոշակային հաշվի արժույթից (ՀՀ դրամից) տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնություններ: Կենսաթոշակային հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվին դրամական միջոցների մուտքի և ելքի դեպքում փոխարկման փոխարժեքը Բանկի կողմից սահմանվում է փոխարկման գործառնության իրականացման ամսաթվի դրությամբ գործող Բանկի արժութային փոխանակման գործառնությունների փոխարժեքով՝ փոխարկումը կատարվում է.

- արժութային հաշվից տարանցիկ հաշվին փոխանցվող գումարների փոխարկման դեպքում՝ գործառնության իրականացման ամսաթվի դրությամբ գործող Բանկի անկանխիկ արժույթային փոխանակման գործառնությունների փոխարժեքով.
- տարանցիկ հաշվից գործարքը կատարելու համար փոխարկման դեպքում՝ գործառնության իրականացման ամսաթվի դրությամբ գործող՝ Բանկի անկանխիկ արժութային փոխանակման գործառնությունների փոխարժեքով:

1.11.Կենսաթոշակառուի կողմից հաշվով գործառնություններ չկատարելու դեպքում հաշվի պահպանման ծախսերը՝ ելնելով գործարք չկատարելու վաղեմությունից Սակագներով սահմանված միջնորդավճարները կամ այլ ծառայության վճարները, անվիճելի անակնկալ կարգով գանձվում են Կեսաթոշակային հաշվից/ներից, վերջինիս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Կենսաթոշակառուի այլ արժութային հաշվից/ներից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին ՀՀ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով, որը հրապարակվում է ՀՀ ԿԲ կողմից պաշտոնական կայքում:

1.12.Կենսաթոշակառուի պահանջով՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված գործարքների վերաբերյալ հարցման ծառայության վճարը գանձվում է Բանկի Սակագներում այդ նպատակով սահմանված միջնորդավճարների համաձայն:

1.13.Բանկը առաջարկում է նաև հեռահաղորդակցման միջոցներով (էլեկտրոնային միջոցներով) հաշվում եղած դրամական մրջոցների տնօրինման հնարավորություններ՝«internet Banking», «SMS Banking» և «Հեռախոսային Բանկ» ծառայությունների միջոցով::

1.14.Կենսաթոշակային հաշվի վրա հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի փոփոխման վերաբերյալ Բանկը հաճախորդին տեղեկացնում է, վերջինիս կողմից ընտրված տարբերակով՝ փոփոխման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ: Բանկի կողմից տեղեկատվությունը համարվում է Հաճախորդին տրամադրված այն վերջինիս փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում վերջինիս համար այն հասանելի դառնալու պահից:

1.15.Բանկն իրավունք ունի փակել Կենսաթոշակառուի հաշիվը առանց նախնական ծանուցման, եթե կենսաթոշակառուի հաշվին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն բավականացնում կենսաթոշակային հաշիվը սպասարկելու համար Սակագներով սահմանված վճարները գանձելու համար և հաշվով գործարքներ չի իրականացվել: Կենսաթոշակային հաշիվների սպասարկման վճարները գանձելիս և կենսաթոշակային հաշիվը փակելիս Բանկն առաջնորդվում է Պայմանագրում նշված սկզբունքներով:

1.16.Կենսաթոշակառուն իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել իր հաշիվը, եթե նա այլևս չի ցանկանում օգտվել Բանկի ծառայություններից և Բանկում չունի այլ հաշիվներ, ավանդներ, վարկեր, որոնք կապակցված են Հաճախորդի տվյալ Կենսաթոշակային հաշվին:

1.17.Կենսաթոշակային հաշվի նկատմամբ ժառանգության ձևակերպումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.18. Բանկը երաշխավորում է Կենսաթոշակառուի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:

2. Տեղեկատվություն Կենսաթոշակային հաշվի սակագների և տուժանքների մասին

2.1 Կենսաթոշակային Հաշվի համար սահմանված են հետևյալ սակագները (հիմք՝ ՀՀ կառավարության 04/11/2010թ. N 1406-Ն որոշումը).

	Ծառայության տեսակը	**Սակագնային պլան «Թոշակային»**	**Սակագնային պլան «Թոշակային-Արտոնյալ»**
1	Բանկային /քարտային հաշվի բացում և սպասարկում	անվճար	անվճար
2	Քարտի թողարկում, տրամադրում	անվճար	անվճար
3	Չնվազող մնացորդ	0	0
4	Կենսաթոշակային հաշվից միցոցների կանխիկացում՝ ՎՏԲ-Հայաստան բանկի կանխիկացման կետերում	անվճար	անվճար
5	Կենսաթոշակային հաշվից միցոցների կանխիկացում՝		
	«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ բանկոմատներից	0 %	անվճար
	«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրեկոլ Բանկ» ՓԲԸ բանկոմատներից	0 %	անվճար
	«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ POS տերմինալով	0 %	անվճար
	*ՀՀ-ում այլ բանկոմատներում**	0.5%	անվճար
	*«ՎՏԲ» խմբի բանկոմատներից**ՎՏԲ խմբի բանկոմատներում(միայն լրացուցիչ քարտերով)*	0 %	0 %
	ՀՀ տարածքից դուրս այլ բանկերի բանկոմատներում (միայն լրացուցիչ քարտերը, բացի ՎՏԲ խմբի բանկոմատներից)	0.5% նվազագույնը՝ 1,500 ՀՀ դրամ	0.5% նվազագույնը՝ 1,500 ՀՀ դրամ
	*Այլ բանկերի POS-տերմինալներում ******	0.5% նվազագույնը՝ 1,500 ՀՀ դրամ	0.5% նվազագույնը՝ 1,500 ՀՀ դրամ
6	Կենսաթոշակառուի պահանջով Քարտի բլոկավորում և ապաբլոկավորում	անվճար	անվճար
7	Բանկոմատի միջոցով Քարտի առգրավման դեպքում՝ Քարտի վերադարձ, ՎՏԲ-Հայաստան բանկի բանկոմատներից	անվճար	անվճար
8	Բանկոմատի միջոցով Քարտի առգրավման դեպքում՝ Քարտի վերադարձ, ՀՀ տարածքում գործող բանկոմատներից	անվճար	անվճար
9	Քարտի վերաթողարկում (ՊԻՆ կոդի կորսի կամ վնասման դեպքում)	1000 ՀՀ դրամ****	անվճար
10	Քարտի վերաթողարկում (կորստի դեպքում)	1000ՀՀ դրամ****	անվաճար
11	Քարտային գործարքների վերաբերյալ ամսական քաղվածքների տրամադրում	անվճար	անվճար
12	Անկանխիկ վճարումների ապահովում	անվճար	անվճար
13	Քարտի գործողության ժամկետ (տարի)	5	5
14	Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
15	**քաղվածքի տրամադրում** *****		
	ընթացիկ կամ նախորդ ամսվա համար	Անվճար	Անվճար
	2-ից 12 ամիս վաղեմության	1900	1900
	1 տարուց ավել վաղեմության	3900	3900

*ՀՀ-ում գործող բոլոր բանկերը, բացառությամբ, Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկե ՓԲԸ

** ՎՏԲ խմբի անդամ բանկերի ցանկը ներկայացված է Բանկի պաշտոնական կայքում:

***Բոլոր բանկերը բացառությամբ "ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ

****9 և10 կետերում նշված ծառայությունները առաջին անգամ մատուցվում են անվճար, հետագայում՝ համաձայն սակագների

Նշված սակագներում չընդգրկված ծառայությունների համար կիրառվում են տվյալ պահին բանկում գործող ընդհանուր սակագները:

***** Ներառյալ ԱԱՀ

2.2 Կենսաթոշակային հաշվի՝

2.2.1«Տարեկան (անվանական) պարզ տոկոսադրույք»՝ տարեկան կտրվածքով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա Բանկը հաշվարկում է հաճախորդին վճարման ենթակա տոկոսագումարները:

Հաշվի տարեկան պարզ(անվանական) տոկոսադրույքի չափ՝ տարեկան 0.01%:

Սահմանված տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝ (100 000 ՀՀ դրամ) * 0.01% =10 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

2.2.2Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ կազմում է տարեկան 0.01%:

«APY-էյ-Փի-Ուայ (այսուհետ՝ APY)»՝ դա կենսաթոշակային հաշվի տարեկան տոկոսային եկամտաբերությունը: APY ցույց է տալիս, թե որքան կկազմի հաշվի տարեկան եկամտաբերությունը կենսաթոշակառուի կողմից պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

APY –ով տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝ (100 000 ՀՀ դրամ) * 0.01% = 10 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

2.3 Քարտի առկայության դեպքում Կենսաթոշակային հաշվի՝

*2.3.1 **տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույքի չափ՝***

	VISA Classic/ MasterCard Standard
AMD	***0.01%***

Սահմանված տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝

- (100 000 ՀՀ դրամ) * 0.01% = 10 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

*2.3.2**հաշվի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝կազմում է՝***

	VISA Classic// MasterCard Standard
AMD	***0.01%***

2.4 Կենսաթոշակային հաշվին հաշվեգրված տոկոսագումարները տարվա վերջում կապիտալացվում են՝ (compounding) հաշվեգրվում են հաշվի մնացորդին:

2.5 Կենսաթոշակային հաշվի մնացորդը՝ հաշվի օրական փաստացի մնացորդն է:

2.6 Կենսաթոշակային հաշվի պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

2.7 Կենսաթոշակառուն, ստանալով Բանկի սեփականությունը հանդիսացող VISA միջազգային վճարային համակարգի VISA Classic դեբետային քարտ, պարտավորվում է Քարտն օգտագործել խստագույնս պահպանելով Քարտից օգտվելու կարգի, "Միջազգային և լոկալ վճարային համակարգերի պլաստիկ քարտերի սպասարկման և թողարկման մասին" կարգի դրույթները, չտրամադրել Քարտը, քարտային տվյալները և PIN կոդը այլ անձանց, թույլ չտալ գերածախս, վճարել Քարտի սպասարկման համար միջնորդավճարները (առկայության դեպքում), Բանկի կողմից հաշվարկված տույժեր և տուգանքները տվյալ պահին Բանկում Կենսաթոշակառուների համար նախատեսված Սակագների համաձայն:
2.8 Քարտի կորստի դեպքում Կենսաթոշակառուն անմիջապես պետք է տեղյակ պահի Բանկի պրոցեսինգային կենտրոնին +(374 10) 560708 հեռախոսահամարով, տեղեկացման պահից 2 (երկու) օրվա ընթացքում Քարտապանը պետք է Բանկ ներկայացնի դիմում՝ Քարտի կորստի վերաբերյալ:
2.9 Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն (անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար տարեկան առնվազն մեկ անգամ, նախորդ տարվա ընթացքում բանկ ներկայանալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ եւ հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին, ընդ որում Կենսաթոշակառուի կողմից հայտարարություն տալ է համարվում Բանկուն անձամբ տվյալ հաշվով որևէ գործարքի կատարումը կամ քարտի սպասարկման (ներառյալ վերաթողարկում) հետ կապված որևէ փաստաթղթի ստորագրումը:
2.10 Սակագները Բանկի կողմից կարող են միակողմանիորեն փոփոխվել: Ընդ որում Սակագների ցանկացած փոփոխության մասին Բանկը պարտավոր է տեղեկացնել Կենսաթոշակառուին այդ օրվանից առնվազն 15 օրացուցային օր առաջ՝ ըստ Հաճախորդի կողմից ընտրված տարբերակի:
2.11 Մյուս բոլոր դեպքերում Պայմանագրի դրույթների փոփոխումը կամ լրացումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ, լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով:

3. Հաշվի բացման և վարման կարգը

3.1. Բանկը պատասխանատվություն չի կրում Կենսաթոշակառուի կողմից Պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերի և դրանցում պարունակող տեղեկատվության արժանահավատության և հետագայում կատարված փոփոխությունների համար: Փոփոխությունների մասին Կենսաթոշակառուն պարտավոր է հայտնել Բանկին և ներկայացնել փոփոխված փաստաթղթերի բնօրինակները, կամ նոտարական կամ օրենքով սահմանված կարգով վավերացված կրկնօրինակները: Քանի դեռ հաճախորդը փոփոխությունների մասին չի ներկայացրել պատշաճ փաստաթղթեր, Բանկն առաջնորդվում է Կենսաթոշակառուի նախկինում ներկայացրած առկա փաստաթղթերով: Կենսաթոշակառուն երաշխավորում է Բանկին հատուցել այն վնասները (ներառյալ բաց թողնված օգուտը), որոնք պատճառել են Բանկին Կենսաթոշակառուի կողմից ծանուցելու պարտավորության խախտման հետևանքով:
3.2. Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, այդ միջոցները դուրս են գրվում Կենսաթոշակառուի կարգադրությունները և դուրս գրման այլ փաստաթղթերը Բանկ մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականությամբ), իսկ անբավարարության դեպքում՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
3.3. Այն դեպքում, երբ Կենսաթոշակառուի հաշիվներին առկա գումարները բավարար չեն վճարման հանձնարարականը կատարելու և դրա համար սահմանված վճարը գանձելու կամ արտարժույթի փոխանակման գործարքն իրականացնելու համար, հանձնարարականը վերադարձվում է Կենսաթոշակառուին առանց կատարման, ընդ որում Բանկը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում Կենսաթոշակառուի կարգադրությունը չկատարելու հետևանքով նրա կրած վնասների համար:
Կենսաթոշակառուի կողմից հաշվի մնացորդի ճշտությունը կարող է վիճարկվել հաշվի քաղվածքը Բանկի կողմից ուղարկելու կամ տրամադրելու օրվանից 10 օրացույցային օրվա ընթացքում, հակառակ դեպքում քաղվածքը համարվում է հաստատված Կենսաթոշակառուի կողմից: Բանկի մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերման դեպքում ուղղումը կատարվում է 2/երկու/ բանկային օրվա ընթացքում:
3.4. Պայմանագրով չկարգավորվող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով "Միջազգային և լոկալ վճարային համակարգերի պլաստիկ քարտերի սպասարկման և թողարկման մասին" կարգով:

4. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:
Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
Հայտարարություն: Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
Հայտարարություն: Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

5. Կենսաթոշակային Հաշվի գումարը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:
Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

6. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Կենսաթոշակառուին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտահարկ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով: